

0 120 -10,

Ծ Ր Ա Գ Ի Ր

ՐԵԾԱՀԱՍԱԿՆԵՐԻ ՀԱՆՐԱԿՐԹԱՐԱՆՆԵՐԻ

ԿԻՍԱԳՐԱԳԵՏՆԵՐԻ ԴՊՐՈՑՆԵՐԻ



375

2-11

ՊԵՏՅՐԱՏ 1930 ՅԵՐԵՎԱՆ



375
2-11

23291

8105 930 01



4656-53

Հրատ. № 1400

Գրատ. № 5781 (բ). պատվ. № 1054, տիրաժ 3,000

Պետհրատի յերկրորդ տպարան Յերեանում

Ծ Ր Ա Գ Ի Ր

ՄԵԾԱՀԱՍԱԿՆԵՐԻ ՀԱՆՐԱԿՐԹԱՐԱՆՆԵՐԻ

(Կիսագրագեցների զպրոցների)

1. ՄԵԾԱՀԱՍԱԿՆԵՐԻ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՏԻՊԸ

Մեծահասակ բանվորների և գյուղացիների ընդհանուր կրթության սխառեմի մեջ՝ հանրակրթական դպրոցներն առաջին աստիճանն են հանդիսանում գրագիտական դպրոցներից (լիկկայաններից) հետո:

Հանրակրթարանը պետք է տա կարդալու և գրելու, հաշվելու գրքով, թերթով և քարտեզով աշխատելու այն նվազագույն ունակությունները, վորոնք անհրաժեշտ են հասկանալու և գիտակից ու գործոն մասնակցություն ունենալու սոցիալիստական շինարարությանը, վորը կազմում է հանրակրթարանի հիմնական նպատակը:

Հանրակրթարանը միաժամանակ և առաջադրում է սովորողին նախապատրաստել ավելի բարձր աստիճանի դպրոցների համար, ինչպիսին են՝ բարձր տիպի դպրոցները, բան-

համալսարանները, առաջին աստ. կուս. դպրոցները և այլն:

Հանրակրթարանը միամյա դպրոց է, ուր սովորում են նրանք, ովքեր ավարտել են լրիվ միամյա (քաղաքի) կամ վեցամյա (գյուղի) գրագիտական դպրոցները կամ ունեն համապատասխան պատրաստություն:

Բայց փորովհետև գյուղի և քաղաքի գրագիտական դպրոցները ավարտողների պատրաստություն մեջ խոշոր տարբերություն կա, ուստի անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել՝ իմացություն մակարդակի ընդհանրություն ձեռք բերելու համար: Այդպիսի միջոցներից են՝ թույլ խմբակներ կամ նախապատրաստական դուզընթաց դասընթացներ կազմակերպել, ուր պիտի տեղավորվեն գյուղի գրագիտության դպրոցն ավարտածները կամ փոշ բավարար չափով գրագետները: Հասկանալի չէ, փոր նման խմբակների կարիքը չի զգացվի գյուղում, ուր գրագիտական դպրոցները համարյա բոլոր վայրերում մոտավորապես նույն մակարդակի չեն: Յեթե քաղաքի գրագիտական դպրոցներն ավարտողներն են կազմում քաղաքի հանրակրթարանի ուսանողության հիմնական կազմը, բնականաբար այս դեպքում ելնախապատրաստական կամ թույլ խմբակներ կազմակերպելու հարկ չկա:

Ժամանակի սղության հետևանքով՝ հանրակրթարանը չի նպատակադրում տալ գիտելիքներ ամբողջական օրջան, այլ անհրաժեշտ նվազագույն վարժույթներ՝ հիմնված գեղարվեստական, հասարակագիտական, կենցաղային նյութերի մշակման վրա, վորպեսզի սովորողը հնարավորություն ունենա ձեռք բերածն ինքնուրույն կերպով ընդլայնելու և հասարակական արտադրական աշխատանքներում գործածելու:

2. ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԿԱԶՄ.

Բանվորա-գյուղացիական ազգայնակչության լաչն խավերի ակտիվությունը տարեց տարի աճում է: Դրան դուզընթաց աճում է նաև նրանց կուլտուրական մակարդակն ու գրագիտության աստիճանը:

Մեծահասակ բանվորների և գյուղացիների կյանքի պայմանների չափազանց բազմազանություն հետևանքով՝ նրանց գրագիտության աստիճանն էլ խիստ բազմազան է:

Յեթե գրագիտական դպրոցների մեծահասակ աշակերտության հիմնական կազմը համեմատաբար ավելի հեշտ է ճշգրիտ փորոշել, ապա այդ բանը չի կարելի առել հանրակրթարաններում սովորողների նկատմամբ:

Մինչդեռ դրանից է կախված հանրակրթական

դպրոցների, ինչպես նաև նրանց ծրագրերի, մեթոդների ու դասագրքերի բնութիւնը:

Անգրագիտության և կիսագրագիտության վերացման վերջին — 1929 թ. Հայաստանական կոնֆերանսը ճշտելով այդ հարցը՝ հետևյալ վորոշումն է կայացրել.

«Հանրակրթական դպրոցներում սովորում են նրանք, վոր ավարտել են գրագիտական դպրոց կամ ունեն համապատասխան պատրաստութիւն (որինակ՝ ինքնուսները, հանրակրթական դպրոցների թերավարտները կամ վաղուց ավարտածները, վորոնք գրել կարդալու և հաշիւելու վարժութիւնները նվազել են):

Գրագիտական դպրոցներն ավարտածների պատրաստության մակարդակի ստուգումը պարզել է հետևյալը.

Այբբենարանների ընթերցարանի հոգւածների նման ուրիշ հոգւածներ կարգում են մի րոպեյում՝ 70—120 գիր: Կարգում են ամբողջական բառերով և վանկերով:

Լավ ծանոթ տպագիր բնագրից արտագրում են մի րոպեյում 6—9 գիր, ինքնուրույն գրելիս 4—6 գիր: Ինքնուրույն գրության մեջ 100 բառից մօտ 75-ը հեշտ կարդացվում է:

Այս տվյալները վերջնական չեն, վորովհետև քիչ քանակութեամբ սովորողներ են ստուգված: Շեղումներ հնարավոր են. կարող է՝ մեկն ավելի դանդաղ գրի, բայց աւագ կարգա և ընդհանրապէս: Սակայն այնուամենայնիւ բերված թվերը կարող են հիմնականում իբրև ուղեցույց ծառայել:

3. ՎԵՐԺՈՒՅԹՆԵՐԻ ԾԱՎԱԼԸ.

Ծրագիրն ընդգրկում է լեզվի, հաշիւի, քարտեզով, գրքով և թերթով աշխատելու նվազագույն տեխնիկական վարժութիւններ, վորոնք մըշակվում են կոմպլեքսիւ թեմաների բովանդակութեան հիման վրա: Բոլորովին հասկանալի յե վոր տեխնիկական վարժութիւններն մշակումը հնարավոր է նաև այն անհրաժեշտ լրացուցիչ նյութերի հիման վրա, վոր վերցված են սովորողի պրոֆեսիոնալ կենցաղային կյանքից, պայմանով, վոր այդ նյութը մատչելի և հետաքրքիր լինի հասակավոր կիսագրագետին:

Լեզվական վարժութիւնների ծավալի մեջ նախատեսված են միայն նրանք, վորոնք նախնական հանրակրթական դպրոցն ավարտող հասակավորին հնարավորութիւն կտան կարդալ և հասկանալ հանրամատչելի գիրք, թերթ, մտքերն արտահայտել գործնական պարզ գրութիւններ:

ձևով, վորոնք առորջա կյանքում պետք են դա-
լիս:

Լեզվի վարժությունները բաժանված են հե-
տևյալ խմբերի:

1. Ընթերցանություն.
2. Աշխատանք գրքով և թերթով.
3. Բանավորի գարգացումը.
4. Ուղղադրություն.
5. Գրավոր վարժություններ.

Ուղղադրության վարժությունների ծա-
վալն ընդգրկում է մինչաբբի քերականական վար-
ժույթների տարրեր: Հասակավորների հանրակը-
թական դպրոցը ձգտում է գրությունը դարձնել
վոչ թե բացարձակ անսխալ, այլ բավարար ըն-
թեռնելի: Այդ պատճառով ուղղադրական գիտե-
լիքներից ծրագրում վերցված են միայն նրանք,
վորոնք նպաստում են այդ սահմաններում դըր-
ված հարցերի լուծմանը:

Հաշվից հասակավորների հանրակրթական
դպրոցը պետք է սովորեցնի աշակերտներին կա-
տարել չորս գործողություններն ամբողջական
թվերով չեմ կիրառել այն առորջա գործնական
կյանքում:

Վարժույթների նյութ են ծառայում վոչ մի-
այն թեմաների կոմպլեքսիվ բովանդակությունը,

այլ նաև սովորողների շրջապատից վերցրած լը-
արցուցիչ թվական ավանդներ:

Դպրոցի հիմնական խնդիրն է հաշվի ասպա-
րիզում՝ սովորեցնել գրքերի, թերթերի թվա-
կան ավանդներից և պարզ հաշվետվություններից
ու նախահաշիվներից գլուխ հանել, կազմել ինք-
նուրույն հաշիվներ, վոր անհրաժեշտ են տնտե-
սության մեջ և հասարակական աշխատանքնե-
րում:

Ամբողջ կուրսի ընթացքում տրվում է ծա-
նոթություն մետրական չափերի մասին: Ծանո-
թացնում են նաև պարզ և տասնորդական կո-
տորակներին, դիագրամաներին և տոկոսներին
այն ծավալով, վորը հնարավորություն է տալիս
դպրոցն ավարտողին հասկանալ այդ թվական
արտահայտությունները գրքերի, թերթերի տե-
ղեկատուների մեջ և այլն:

Ծրագրով տարրական գիտելիքներ են տըր-
վում քարտեզով աշխատելու մասին: Տարածա-
կան կողմնորոշման մասին տրվելիք գիտելիք-
ների պատվաստումը հնարավորություն կտա ու-
նենալու կոնկրետ պատկերացում մեր ժողովըր-
դական տնտեսության և այլ չերկրների մասին:
Այդ առանձնապես անհրաժեշտ է թերթերը հաս-
կանալու համար:

4. ԱՅԽԱՏԱՆԻ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Այս ծրագիրը միայն կողմնորոշման համար է: Դա պետք է՝ նայած աշխատանքի տեղական պայմաններին (տեղագրական առանձնահատկություններ, խմբի կազմի ըստ սեռի, հասակի, ըստ գրագիտությունից աստիճանի) համապատասխան ձևով վերամշակվի ինչպես բովանդակություն, նույնպես և գիտելիքների կողմից: Թեմաների բովանդակություն վերամշակումը պետք է յեղակետ ունենա տեղական մատերիալը և հենց իրենց սովորողների փորձը: Թեմաների և յենթաթեմաների վերլուծությունից սկզբին տրվում են հարցեր, վորոնք մատնացույց են անում ուսուցչին տեղական պայմանների և սովորողների փորձի ոգտագործման անհրաժեշտությունը, վորպեսզի մասնավորից ընդհանուրին, մոտիկից—հեռավորին գնան:

Առանձին թեմաները հարկավոր է խորացնել և մանրամասնել ծրագրի սահմաններում, նայած թե սովորողներն ինչքան են հետաքրքրվում նրանով. տեղական կյանքից վերցրած նյութերը, համապատասխան են այս կամ այն թեմային:

Յուրաքանչյուր թեմայի բովանդակությունը պետք է կապել վորոշ հետևողականությամբ դասավորված վարժություններ: Այդպիսի համաչափ

և հետևողական դասավորությունն անհրաժեշտ է, վորովհետև դա մի կողմից ցույց է տալիս կոմպլեքսային նյութի վրա հիմնված վարժությունների մշակման կարգը, իսկ մյուս կողմից այդպիսի դասավորումից հայտնի է դառնում, թե վարժությունների շարքի քանակ մոտավորապես անհրաժեշտ է գիտելիքներից յուրաքանչյուրի յուրացման համար: Շատ կարևոր է, վոր ուսուցիչն այս կողմի վրա ուշադրություն դարձնի: Այս կամ այն գիտելիքի տեղը փոխելը միշտ հնարավոր է և անհրաժեշտ՝ նայած խմբի գրագիտությունից աստիճանին ու սովորելու պրոցեսում սովորողների առաջադիմությունը:

Աշխատանքի հաջողությունը հասակավորների հանրակրթարանում՝ կախում չունի միայն ծրագրից: Մեծ նշանակություն ունեն ծրագրային նյութի մշակման մեթոդները: Մանկավարժական պրոցեսի սկզբունքներից մեկը մենք արդեն վերևում մատնացույց արինք — դա տեղական մատերիալի ու սովորողների փորձի ոգտագործումն է, վորը նպաստում է դասավանդման նյութի կոնկրետացման դյուրեմբով ելլելու թյանը:

Հասակավորների հանրակրթական դպրոցներում դասավանդման հիմնական բացը — դա լեկցիոն մեթոդի գերիշխանությունն է: Ուսուցիչն

առաջադրում ե սովորողներին «բանավոր ճշմարտություններ» կամ թե նույն ուսուցիչը առաջարկում ե կարգալ մի պատմվածք, կամ գրել մի պարբերություն, կամ թվաբանությունից մի քանի որինականեր լուծել՝ հաշվի չառնելով հասակավորների հետաքրքրությունն ու նրանց ինքնուրույն գիտողությունները: Ընդհանրապես ամեն ինչ բղխում ե ուսուցչից: Սովորողները հաճախ մեքենայաբար կատարում են այն բոլորը, ինչ ուսուցիչըն առաջարկում ե: Այս ձևի դասավանդման հետևանքներն են՝ թույլ յուրացում՝ և ձեռք բերված գիտելիքների անկայունություն:

Մեթոդիկայի հիմնական պահանջներ են ուրեմն՝

1. Դասավանդումը կառուցել կոնկրետ նյութի վրա: Ինչ վոր նոր ե, պետք ե կապակցվի սովորողներին ծանոթ և նրանց կողմից յուրացված փորձին: Նորը պետք ե ողնի հասակավորին ծանոթ նյութի ըմբռնման, նրա փորձը ճշտելու և սխառեմի չենթարկելուն:

2. Հաղորդվելիք նոր գիտելիքը պետք ե անհրաժեշտաբար սովորողն ինքնուրույն կերպով մշակի լսողության, տեսողության և մոտոր զգայարանքների ակտիվ մասնակցությամբ:

3. Ըմբռնած և յուրացրած նյութը գործադրվի գործնական կանքում:

Միայն այն դեպքում, յերբ այս չերեք աստիճաններից կանցնեն, գիտելիքները կարող են հիմնովին յուրացվել:

Հետևաբար դեռևս բավական չե լավ պատմել և կարգալ կամ գրել այդ թիմայի մասին, այլ պետք ե բորբոքել ակտիվ ըմբռնում և սովորողների քննադատական վերաբերմունքը դեպի հաղորդված նյութը: Անհրաժեշտ ե հնարավորություն տալ՝ վարժությունների միջոցով ամրապնդել ըմբռնածը:

Ձեռք բերած գիտելիքները կյանքում կիրառելը միայն ցույց կտա, թե սովորողն ինչ չափով ե յուրացրել այդ գիտելիքները: Ստուգման այլ միջոց չկա:

5. ԹԱՄԱՆԱԿԱՆ ՏՈՅՐ

Ուսումը տեղում ե — քաղաքի հանրակրթարանում՝ մի ամբողջ լրիվ ուսումնական տարի (մոտ 9 ամիս), գյուղում մոտ 6 ամիս:

Թե քաղաքում և թե գյուղում շաբաթական լինելու չե 5 որ պարապմունք, որական 2 դասաժամ: Այդպիսով քաղաքում (տոները հանած)՝ լինելու չե մոտ 400, գյուղում՝ մոտ 270 պարապմունքի ժամ:

Որական պարապմունքը տեղի չե 120-130

առաջադրում ե սովորողներին «բանավոր ճշմարտություններ» կամ թե նույն ուսուցիչը առաջարկում ե կարդալ մի պատմվածք, կամ գրել մի պարբերություն, կամ թվաբանությունից մի քանի որինակներ լուծել՝ հաշվի չառնելով հասակավորների հետաքրքրությունն ու նրանց ինքնուրույն գիտողությունները: Ընդհանրապես ամեն ինչ բղխում ե ուսուցչից: Սովորողները հաճախ մեքենայաբար կատարում են այն բոլորը, ինչ ուսուցիչըն առաջարկում ե: Այս ձևի դասավանդման հետևանքներն են՝ թույլ յուրացում՝ և ձեռք բերված գիտելիքների անկայունություն:

Մեթոդիկայի հիմնական պահանջներ են ուրեմն՝

1. Դասավանդումը կառուցել կոնկրետ նյութի վրա: Ինչ վոր նոր ե, պետք ե կապակցվի սովորողներին ծանոթ և նրանց կողմից յուրացված փորձին: Նորը պետք ե ոգնի հասակավորին ծանոթ նյութի ըմբռնման, նրա փորձը ճշտելու և սխալների լծակները:

2. Հաղորդվելիք նոր գիտելիքը պետք ե անհրաժեշտաբար սովորողն ինքնուրույն կերպով մշակի լսողության, տեսողության և մոտոր զգայարանքների ակտիվ մասնակցությամբ:

3. Ըմբռնած և յուրացրած նյութը գործադրվի գործնական կանքում:

Միայն այն դեպքում, յերբ այս չերեք աստիճաններից կանցնեն, գիտելիքները կարող են հիմնովին յուրացվել:

Հետևաբար դեռևս բավական չե լավ պատմել և կարդալ կամ գրել այդ թիմայի մասին, այլ պետք ե բորբոքել ակտիվ ըմբռնում և սովորողների քննադատական վերաբերմունքը դեպի հաղորդված նյութը: Անհրաժեշտ ե հնարավորություն տալ՝ վարժությունների միջոցով ամրապնդել ըմբռնածը:

Ձեռք բերած գիտելիքները կլանքում կիրառելը միայն ցույց կտա, թե սովորողն ինչ չափով ե յուրացրել այդ գիտելիքները: Ստուգման այլ միջոց չկա:

5. ԹԱՄԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ուսումը տևում ե — քաղաքի հանրակրթարանում՝ մի ամբողջ լրիվ ուսումնական տարի (մոտ 9 ամիս), գյուղում մոտ 6 ամիս:

Թե քաղաքում և թե գյուղում շաբաթական լինելու չե 5 որ պարապմունք, որական 2 դասաժամ: Այդպիսով քաղաքում (տոները հանած)՝ լինելու չե մոտ 400, գյուղում՝ մոտ 270 պարապմունքի ժամ:

Որական պարապմունքը տևելու չե 120-130

րուպե (110—120 րուպե դաս և 10 րուպե դասամիջոց)։ Մոտ 10 րուպե տրվում է թեմայի բովանդակութունը լուսաբանող զրույցին, 45 րուպե լեզվին, 35 րուպե հաշվին և 20 րուպե քարտեզով, զբոսով և թերթով աշխատելուն։

Այս թվերը մոտավոր թվեր են, վորոնցից կարելի չե շեղումներ անել՝ նայած սովորողների կազմին և նրանց պատրաստությանը այս կամ այն առարկայից։

6. ՉԵՌՆԱՐԿՆԵՐ

Հանրակրթարանի հիմնական ձեռնարկներն են՝ քաղաքի համար՝ «Դեպի նոր կյանք», գյուղի համար՝ «Կոլեկտիվ ուղի» հայերենի դասագրքերը։

Վորովհետև հանրակրթարանների պարապմունքների սիստեմը կոմպլեքսային է և վոչ առարկայական, այդ պատճառով ել մայրենի լեզուն («Դեպի նոր կյանք»-ը և «Կոլեկտիվ ուղին» միայն հայերենի դասագիրք են) պետք է անցնել վորպես կոմպլեքսի մի մասը և վոչ անշատ՝ իբրև առանձին դիսցիպլին։

Դրանից բղխում է այն, վոր ուսուցիչը նախ և առաջ պիտի լավ ուսումնասիրած լինի ամբողջ ծրագիրը, պարզ պատկերացնի այդ ծրագրի պատկերի ամբողջականութունը և հիմնական դրույթը,

վորպեսզի նա կարողանա մայրենի լեզվի տեղն ու դերը վորոշել այդ ծրագրի ամբողջության մեջ, վորովհետև դրանով է պայմանավորված այն հանգամանքը, թե ամբողջ ուսումնական տարվա ընթացքում հայերենից ինչը ինչ ծավալով և ինչ խորությամբ պետք է անցնել։

Այս բանը հնարավորութուն կտա ուսուցչին կազմելու միայն հայերենի տարեկան պլանը—այնպես, վոր հայերենն իր ներքին ուրույն ամբողջականութունն ու համակարգվածութունն ունենալով հանդերձ՝ նպաստի ամբողջ կոմպլեքսի խորացմանն ու յուրացմանը։

Սակայն բավական չե ամբողջ տարվա պլանն ունենալ։ Պետք է տարեկան պլանը համաչափ և նպատակահարմար—մեթոդապես—բաշխել ըստ թեմաների և յենթաթեմաների. այսինքն՝ կազմել ամբողջ տարեկան աշխատանքների որացուցային պլան։

Որացուցային պլանն իր հերթին—պարապմունք առ պարապմունք—պետք է մանրամասնել։ Ուսուցիչը նախ քան դասարան մտնելը պետք է այդ որվա դասը մեթոդապես մշակած լինի, ունենա այդ ժամվա պարապմունքի պլանը։

Պլանավորման այս ամբողջ աշխատանքի ժամանակ, սակայն, ուսուցիչը չպիտի բավականանա

ծրագրով և դասագրքով, վորովհետև նախ՝ նը-
րանք, — մանավանդ ծրագիրը, վոր մոտ յերեք
տարի առաջ ե կազմվել, — բավական հասցած են՝
այն յերևույթի հետևանքով, վոր մեզ մոտ կյանքն
ավելի արագ տեմպով ե զարգանում և փոփոխ-
վում, քան վոր դրքերը կարենային այդ կան
խառեսել և յետևից հասնել. յեղիւրդ՝ դասագրքը
վիայն հայերենի համար ե, ուստի քարտեզով,
գրքով և լրագրով աշխատելու գիտելիքներն ու
վարժույթները, ինչպես և մաթեմատիկական ի-
մացություններն ու թվական տվյալները պետք
ե այլ աղբյուրներից քաղել. Այդպիսի աղբյուր-
ներ են՝ աշխարհագրության և մաթեմատիկայի
դասագրքերը, վորոնք իրենց մեջ պարունակում
են ծրագրով պահանջված գիտելիքներն ու վար-
ժույթները (որինակ՝ Մ. Գասպարյանի «Մաթե-
մատիկայի աշխատանքի գիրք»-ը, Աբրահամյանի
և Հասրաթյանի «Աշխարհագրության ձեռնարկ»-ը
և այլն)։

Սակայն կողմնակի դասագրքերից և ձեռնարկ-
ներից ավելի կարևոր ե ընթացիկ գրականու-
թյունը, — ուր արտացոլված են քաղաքական,
տնտեսական-շինարարական, կուլտուր-հասարա-
կական հրատապ խնդիրները, — և մանավանդ ո-
րաթերթերն ու մյուս պարբերագրերը, վորոնց

մեջ ավելի մարտական ու այժմեական հարցեր
են արծարծված։ Այդ նպատակի համար հանձնա-
րարելի յեն՝ «Սոց. արշավ» (մանավանդ քաղա-
քափայ և արդյունաբերական վայրերի համար),
«Մաճկալ» (գյուղատիպ վայրերի համար), «Ավան-
գարդ», «Հայաստանի աշխատավորուհի», «Սոր-
նըդային Հայաստան» և այլ թերթերը։ Ուսու-
ցիչը պետք ե ընթացիկ գրականության և մա-
մուլին ուշի-ուշով հետևի և այնտեղից վերցնի
սովորողներին մատչելի հոդվածներ, թարմ թվա-
կան տվյալներ ու այլ նյութեր, վորոնք բավա-
րար չափով չկան կամ բոլորովին բացակայում
են ինչպես հայերենի դասագրքում, այնպես և
ոժանդակ ձեռնարկներում. այդ բոլորը նա պետք
ե կանխավ մշակի, ներձուլի ծրագրի հետ և
մտցնի իր աշխատանքների պլանի մեջ՝ այնպես,
վոր տարեկան ծրագիր-միլիմետր չտուժի։

Ուսուցիչը պետք ե հետևի տեական և հար-
վածային կամ պանիաներին և ամբողջ դպրոցի
հետ իր գործոն մասնակցությունը ցուցաբերի
այդ կամ պանիաներին։ Ներկայումս, սոցիալիս-
տական արշավի այս շրջանում, յերբ տեղում
յեռանդով ամբողջ խորհրդային հասարակայնու-
թյունը գործի յե լծվել, հասակավորների հան-
րակրթական և գրագիտական դպրոցներն ել պիտի

55
56
57
58
59



իրենց աշխատանքների մեջ խոշոր բեկում կատարեն՝ այդ արշավին մասնակցելու ուղղւթյամբ։ Գյուղի սոցիալիստական վերակառուցման և դրա հետ կապված կոլտնտշարժման ու գարնանացանի խնդիրները, ինչպես և առհասարակ հնգամյա պլանը – կենսական պահանջներ են առաջադրում նաև հասակավորների հանրակրթական և գրագիտական դպրոցներին, վորտեղ ընդգրկված են քաղաքի և գյուղի աշխատավորական համեմատաբար ավելի հետամնաց խավերը, վորոնք, հենց այդ հետամնացության պատճառով, ավելի կարիք ունեն սոցիալիստական վերակառուցման խնդիրներն ուսումնասիրելու, վորպեսզի նրանք ելքաշվեն սոցիալիստական շինարարության յեռուզեռի շրջապտույտի մեջ։ Այս ի նկատի ունենալով ե, վոր Քաղուսվարչութիւնը հրատարակության ե տվել «Գարնանացանի կամպանիան և հասակավորների գրագիտական ու հանրակրթական դպրոցները», «Հնգամյակը և կոլխոզարժուժը» (ծրագիր-հրահանգ), «Գարնանացանը և խրճիթ-ընթերցարանը», «Մայրենի լեզուն հասակավորների հանրակրթական դպրոցներում» և այլն, վորոնք լինելու յեն նաև հիմնական լրացուցիչ ծրագիր-ձեռնակը մեծահասակների դպրոցների համար։ Այդ պատճառով ուսուցիչը յուր

աշխատանքների պլանը կազմելիս պիտի դրանք ի նկատի ունենա իբրև լրացուցիչ ձեռնարկներ և, այդ հարցերին բավականաչափ ժամեր հատկացնելով, մտցնի իր պլանի մեջ։

Պլանավորման և մեթոդապես մշակված ծրագիր կազմելու աշխատանքներն անշուշտ շատ զժվարին և պատասխանատու յեն և վեր են անհատ-ուսուցչի ուժերից։ Այդ պատճառով անհաժեշտ ե, վոր այդ աշխատանքները կատարվեն կոլեկտիվ ուժերով, սեկցիոն պարապմունքների ընթացքում, մանկխորհուրդներում և այլն։

Ցանկալի յե, վոր այդ աշխատանքների արդյունքներն ուղարկվեն Քաղուսկարինետին, վորպեսզի նոր ծրագիր մշակելիս նա կարողանա հիմնվել նաև մասսայական փորձի ու դիտողութիւնների վրա։ Այդ դեպքում միայն ծրագրերը կարող են կենդանի և կենսունակ լինել։

Այսպլանավորման աշխատանքները կատարելուց հետո ուսուցիչը պետք ե լեզվական վարժույթների (навык) ամբողջ ծավալը վորոշի (հիմնվելով ծրագրի վրա) և տեսնի, թե՞ դրանց վոր մասը վոր հոգվածի հետ ե հարմար կապել։

Նա պետք ե վարժույթն ուսումնասիրի՝ հոգվածի տեսակետ։ հող. վարժույթի տեսակետից։ Այսինքն՝ գտնի, դուրս բերի հոգվածից այն, ինչ վոր վար-

ժողովի մշակման, յուրացման և խորացման նպատակով և հատկապես այն վարժույթները կապի այս կամ այն հոգվածի հետ, վորոնց համար տվյալ հոգվածում բավականաչափ որինականներ կան:

Վարժույթներն, իբրև կանոն, պիտի անհրաժեշտորեն բղխեն և դուրս բերվեն հոգվածներից և վոչ թե նրանցից անկախ լինեն կամ միայն ձեվականորեն, արտաքինապես կապված լինեն հոգվածների հետ: Սովորողները — դասատուի գլխի գցող հարցերի ոժանդակությամբ — ինքնուրույն կերպով պիտի դիտեն հոգվածի մեջ տիրապետող ախտին և կամ այնինչ լեզվական չեղելությունը, ընդհանրացումներ կատարեն և «կանոններ» դուրս բերեն: Այդ կանոնները, դասատուի ոգնությունամբ, ճշգրիտ ձևաբանվելուց հետո՝ պետք է հստակաբար հաջողականությունը գրի առնվեն տետրակներում միջանի բնորոշ որինականների հետ միասին:

Այդ որինականները, ինչպես ասացինք, պիտի դուրս բերվեն այս կամ այն հոգված և լրացվեն ուսանողների կողմից ինքնուրույն ձեվով կազմած այլ որինականներով:

Ուսանողների խնդնությունությունը չի նշանակում, վոր դասատուի անելիքները պակասում են: Ընդակառակն: Դասատուն վոչ միայն

պիտի դասաւում մանելուց առաջ մեթոդապես մշակի հոգվածը, դուրս բերի կանոնները և այլն. նա պետք է կանխատեսի՝ գեթ ընդանուր գծերով, թե նույն աշխատանքը դասարանում — արդեն սովորողների կողմից կատարվող — ինչ ընթացք է բռնելու, վորպեսզի նա առաջուց պատրաստվի այդ ընթացքին ուղղություն տալու: Յեվ յերբ նա մտնում է դասարան, պիտի կարողանա այնպիսի տակտով վարել գործը, վոր իր միջամտությունը բոլորովին աննկատ մնալով հանդերձ՝ ուսանողների խնդնությունն աշխատանքների քե՛րն արագացր և քե՛րն արդունց այն լինի ինչ նա կանխատեսել էր:

Ծրագրային նյութի բաշխման ժամանակ խրատությունը պիտի հետևել ուսուցման սեմպլին. վորպեսզի չլինի թե նյութի շատություն և խճողման հետևանքով ուսուցումը «սրընթաց անցնի առանց հետք թողնելու», ինչպես հաճախ գտնվում են ուսանողները՝ մանավանդ բանվոր ուսանողները, վորոնք մեր հետաքրքրությունն առանցքը պիտի կազմեյին:

Ուստի աշխատանքի պլան կազմելիս պետք է բռնել ծրագրի խիստ պարզեցման ուղին, հիմք վերցնելով անհրաժեշտ միջիմուր (գնտելիքների և վարժույթների) և նպատաւոր պայմաններում

միայն այն խորացնելով և ընդլայնելով: Ուսանողը պիտի լավ յուրացնի սովորելիքը և կարենա այն գործադրել իրական կյանքում:

Յեթե ծրագրի նույնիսկ անհրաժեշտ միջնորդ անցնելու համար կարիք լինի աշխատանքների մի մասը դասաժամերից դուրս փոխադրել, ապա այդպիսի դեպքերում, նախ՝ տանը կարելի չէ միայն այնպիսի աշխատանքներ ու առաջադրություններ տալ, վոր սովորողները միայն դասաբանում սովորածի հիման վրա կարող են կատարել՝ առանց ավելորդ շեղումների և խաթափումների: Յերկրորդ՝ տան աշխատանքներն այնքան շատ չպիտի լինեն, վոր ուսանողը չըկարողանա կատարել, կամ կատարելիս ել նրա մյուս՝ նույնչափ կարևոր գործերը կամ նրա առողջությունը տուժի:

Յեթե ուսանողների միջև գրագիտություն մակարդակի խիստ մեծ տարբերություն կա, ապա նրանց խմբերի բաժանելիս պետք է հիմք վերցնել մայրենի լեզուն, վորովհետև քարտեզով աշխատելը, հաշիվը և այլն ավելի՝ գիտելիքներ և մտածական իմացություններ են, քան վարժույթնե՛ր (навык)։ Իսկ իմացություն և գիտելիք ավելի կարճ ժամանակում է հնարավոր ձեռք բերել. մինչդեռ վարժույթը, — իսկ լեզուն վար-

ժույթ է, — շատ ավելի չէ ժամանակ պահանջում. ուրեմն և՛ ավելի կարճ ժամանակ է պետք՝ ուսանողների իմացությունն ու գիտելիքները մի մակարդակի բերելու, քան նրանց գրագիտություն աստիճանը:

Յեթե դպրոցում մի խմբից ավելի չկա, այդ դեպքում պետք է դիմել այլ միջոցների ոգնություն — ինչպես՝ հատուկ տնային աշխատանքներ, կոնսուլտացիա, ժամանակիս կատարած հաշվառք, արձակուրդային առաջադրություններ, ուժեղների ամրացում թուլելիս, խժեռակրթիչների կազմակերպում և այլն:

Յեթե մենք վերևում (կետ 11) սասցինք, թե լեզվական վարժույթները պիտի կապված լինեն հոգվածների հետ և բղխեն սրահից, դա չի նըշանակում, թե վարժույթների մեթոդական կարգը պիտի մեքենաբար ստորադասել հոգվածների պատահական հաջորդականություն: Ընդհակառակն՝ հոգվածների ընտրությունը պիտի կատարվի ըստ վարժույթների մեթոդական կարգի և, յեթե հոգվածների մեջ վարժույթները հիմնավորող բավարար չափով որինակներ չկան, ինքնուրույն կերպով կազմված նոր (հոգվածից դուրս, բայց բովանդակալից) որինակներով լրացվի հոգվածների վարժութային թերին:

Լեզվական վարժույթների կարգը սահմանելիս պետք է ղեկավարվել այն հիմնական սկզբունքով, վոր լեզվի մեջ մասը նշանակություն չեմ իմաստ է ստանում ամբողջի մեջ, որինակ՝ պարբերությունը հոգվածի մեջ, խոսքը՝ պարբերության մեջ, ասույթը՝ խոսքի մեջ, բառն՝ ասույթի մեջ և հնչյունը վանկի մեջ:

Այս հիմնական սկզբունքից բխում է, վոր վոչ թե մասերից պետք է սկսել և այնուհետև հաջորդական կցորդումով հասնել ամբողջին (համադրական կամ սինթետիկ առաջնություն), այլ նախ պետք է տալ ամբողջը (լինի այդ ամբողջը մի հոգված, մի լոգունք, մի հատված, մի խոսք), ապա ա դ ամբողջը վերլուծել իր բաղադրիչ մասերի, պարզել այդ մասերի փոխադարձ կապն ու դերն ամբողջի մեջ և ի վերջո, վերջնագրկել այդ վերլուծված մասերն ամբողջի մեջ: Որինակ. — նախ՝ պետք է տալ հոգվածի ամբողջական տպավորությունը՝ վառ, կենդանի և անմիջորեն: Ապա՝ հոգվածը բաժանել զխավոր մասերի, ինչ չափով վոր այդ մասերը հայտարարում են ամբողջի հիմնական կողմերը: Այդ գլխավոր մասերի մեջ ընդգծել, պարզել լեռնամասերը և այսպես շարունակ մինչև վերջին պարզ բաղադրիչ տարրերը: Այնուհետև այդ տար-

րաբաշխված մասերից պետք է վերականգնել ամբողջը:

Մեթոդական շարժման այս յերեք մոմենտները (ամբողջի քալը, այն վերլուծելը, այն վերականգնելը) սերտորեն կապված են իրար հետ. — վերականգնված ամբողջականն ըստ եյուլթյան նույն քված ամբողջականն է՝ ճոխացված վերլուծության միջոցով. քալավորությունը (քալվածը) դառնում է (վերլուծությամբ) գիտակցություն (վերականգնվածը¹⁾:

Այս ղեկավար սկզբունքը կիրառելով վարժույթների նկատմամբ՝ կստանանք լեզվական վարժույթների մոտավորապես հետևյալ հաջորդական համակարգությունը.

1. Գրքի բովանդակությունը և անունը:
2. Բաժինների և լեռնաբաժինների բովանդակությունը և վերնագիրը:
3. Հոգվածի հիմնական առանցքը և կապը վերնագրի հետ:
4. Հոգվածի հիմնական մասերն ու լեռնամասերը, նրանց փոխադարձ կապը և տեղն ու դերն ամբողջության մեջ. դրանց վերնագրումները:
5. Ամբողջական խոսք և վերջակետ:

¹⁾ Այս խնդրի մասին տես՝ «Լեզվի ամբողջականությունը մանկավարժական տեսակետից», «Ժողովրդական Լուսավորություն» 1928 թ. № 4, էջ 384:

6. Խոսքի մասերը՝ ասուլթներ և ասուլթ-ների մասերը՝ բառեր, Ստորակետ:

7. Գրավոր և բանավոր խոսք: Ձայնի չել-ևեջը կարգալիս և կետադրություն:

8. Բառերի արտասանությունն ու դրու-թյունը. ուղղագրական դիտողություններ ու կանոններ: Հնչյունաբանություն, բառակազ-մություն, ձևաբանություն (հոլովում և խոնար-հուծը վորպես ածանցման ձևեր՝ առանց լրիվ համակարգման և տերմինոլոգիայի):

Առաջին չորս վարժույթներն ընդունված ե ամփոփել «Աշխատանք գրքով և լրագրով» անվան տակ: Վերջին չորսն արդեն լեզվական վարժույթ են նեղ մտքով, վորի մեջ մտնում են՝ կար-դալը, գրելը և գրավոր ու բանավոր խոսքի զարգացումը:

Այժմ, դարձյալ համառոտ՝ թեզիսների ձևով, խոսենք այդ վարժույթների մասին առանձին-առանձին:

9. Պարապմունքների կարգը և տեղողությունը.

ա) ներածական զրույց

(թեման բացատրող) 10 — 15 ր.

բ) Ընթերցանություն, վերլուծում,

աշխատանք գրքով և լրագրով 40 »

գ) Գրավոր աշխատանքներ (լեզվից) 30 »

դ) Հաշիվ 35 »

ե) Աշխատանք քարտեզով 5 — 10 »

Մի որվա պարապմունքների տեղողությունն ընդամենը՝ . . . 120 — 130 րոպե:

10. Ինչպես այս տախտակից չերևում ե՝ պարապմունքների մեծ մասը (80—85 րոպե, ա, բ և գ կետերը) հատկացված ե լեզվին, վոր կոմպլեքսի գլխավոր առանցքն ե կազմում: Սակայն «լեզուն» նեղ մտքով չպիտի հասկա-նալ: Այստեղ մտնում են ներածական զրույց-ները (վորոնք մեծ մասամբ հասարակագիտա-կան բնույթ ունեն, վորովհետև վերաբերում են հողվածների կենցաղային, արտադրական և այլ հասարակագիտական կողմերի վերլուծու-թյանը), գիրք և լրագիր գործածելու վարժույթ-ները, լեզվական դիտողությունները, գրավոր բազմապիսի աշխատանքներ և այլն: Այս մտքով վերցրած՝ «լեզվին» պարապմունքների տեղ-ղության $\frac{2}{3}$ -ը հատկացնե ատ չե:

Այս տախտակը քարացած և անփոփոխ մի բան չե: Հաճախ կարիք ե լինում ներածական զրույցին նշանակվածից ավելի ժամանակ հատ-կացնել, բանավորին՝ ավելի քիչ, գրավորին՝ նույնպես և այլն: Այս փոփոխությունը կախված ե մի կողմից անցնելիք նյութի բնույթից, մյուս կողմից այն հանգամանքից, թե ուսանողության տվյալ կազմը վճր վարժույթից (լեզվակա՞ն, մաթեմատիկակա՞ն և այլն) ավելի կարիք ունի լրացումների և խորացման:

Ծ Ր Ա Գ Ի Ր

(Հաջորդաբար մեակվող քեմաներ)

Ա. Բ Ա Ժ Ի Ն

ԻՆԳՈՒՍՏՐԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐՈՎ

1. Թեմա. — Ընդ կյանք կառուցեմք: Տալ բաղ-
դատական հակադրությունը նորի և հնի պատկերը.
նախ՝ նորի նվաճումները, ապա հնի վիճակը:

2. Թեմա. — 1. Մեծագույն վառելիք, 2. Բնական
հարստություններ:

3. Թեմա. — Արհմիությունը վորպես կոմունի-
զմի դպրոց:

1. Արհմիությունները և աշխատանքի պաշտա-
նությունը:

2. Արհմիությունները և մասսաների կուլ-
տուրի թափանչումը:

3. Արհմիությունների դերը արդյունաբերու-
թյան մեջ:

4. Թեմա. — Ժողովրդական սնեստության
սոցիալիստական վերակառուցումը:

1. Նոր դործարաններ և ֆաբրիկաներ ենք
կառուցում:

2. Ելեկտրոֆիկացիա.

3. Ինքնարժեքի իջեցումը և գների եռանագ-
ման քաղաքականությունը:

4. Խոշոր արդյունաբերությունը վորպես սո-
ցիալիզմի կառուցման հիմք:

Բ. Բ Ա Ժ Ի Ն

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԿՈՒԼԵԿՏԻՎԻԶՄԸ ՄԵՆԱԿԱՆ

1. Թեմա. — Գյուղի յեվ փաղաքի կապը:

1. Ինչ է տալիս քաղաքը գյուղին:

2. Ինչ է տալիս գյուղը քաղաքին:

2-րդ քեմա. — Կոոպերացման յեվ կոլեկտի-
վացման միջոցով դեպի սոցիալիզմ:

1. Կոոպերացիան և գյուղի սոցիալիստական
վերակառուցումը:

2. Կոլտնտեսությունները, խորհրդային տն-
տեսությունները, կոմունաները:

3-րդ քեմա. — Գյուղատնտեսության վերակա-
ռուցում:

1. Գյուղատնտեսության սերնայացումը:

2. Ապրանքափոխանակություն գյուղի և քա-
ղաքի միջև նոր սկզբունքներով:

3. Շ ֆընկերություններ և գյուղի կուլտուր-
կրթական մակարդակի բարձրացումը:

Գ. Բ Ա Ժ Ի Ն

ԸՄՐԱՑՆԵՐԻ ԽՈՐՀՈՐԴՆԵՐԻ ԻԺՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ

1. Թեմա. — Փաթիլի կոմունան իբեվ պրո-
լետարական դիկտատուրայի փորձ:

2. Թեմա — Կապիտալիզմի զարգացումը յեվ բանվոր դասակարգի պայքարից դրվագներ:

3. Թեմա. — Ցարական ինքնակալությունը յեվ մասսաների ստեղծումը:

1. Յարիզմն իբրև ժողովուրդների բանա:

2. 1905 թ. հեղափոխությունը վերպես առաջին փորձ դեպի հոկտեմբեր:

3. Բանվոր դասակարգի պայքարը բուրժուական-կալվածատիրական բլոկի դեմ:

4. Թեմա. — Հոկտեմբերը յեվ խորհուրդների իշխանության կազմակերպումը:

1. Խորհրդային իշխանությունը և մասսաների մասնակցությունը խորհրդային շինարարության մեջ:

2. Բոլոր ազգերն ոգտվում են հավասար իրավունքներով:

Դ. ԲԱԺԻՆ

ԽՈՐՀՐԴՈՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆ ԸՄԲՈՂՋ ԱՅԽԱՐՀԻ ԱՅԽԱՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՅՐԵՆԻՔՆ Ե

1. Թեմա. — Խորհրդային միությունն աշխատանքի միակ հանրապետությունն է ամբողջ աշխարհում:

1. Բուրժուական գլխավոր յերկրները. բանվորների ճնշված դրությունը:

2. Գաղութները: Գաղութային աշխատավորությունը կրկնակի շահագործվում է:

3. Բուրժուական յերկրները թշնամական ֆառախականություն են վարում ԽՍՀՄ-ի նկատմամբ:

4. Արտաքին առևտրի մենաշնորհը, սոցիալիստական շինարարության հիմքերից մեկն է:

2. Թեմա. — Կարմիր բանակը Խորհրդային միության պահակն է:

3. ԽՍՀՄ ամբողջ աշխարհի աշխատավորների հեղափոխությունն է:

Ծ Ր Ա Գ Ի Ր

ՀԱՍՏԱԿԱՎՈՐՆԵՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ
ԴՊՐՈՑՆԵՐԻ

(Հաջորդաբար մեակվող քեմաներ)

Ա. Բ Ա Ժ Ի Ն

ԳՅՈՒՂԸ ԿՈՒԼԵԿՏԻԸՑՄԸՆ ՃԸՆՃՊԵՐՅԻՆ

1. Թեմա. — Նոր կյանք ենք կառուցում:
2. Թեմա. — Հողագործությունը բարեխալվում է:
3. Թեմա. — Հողաշինարարություն, սերմափոխություն:
4. Թեմա. — Սերմագործում և բերքատվություն բարձրացում:
5. Թեմա. — Գյուղատնտեսություն մյուս հյուսիսներն էլ են զարգանում:
6. Թեմա. — Գյուղատնտեսություն մեքենայացում:
7. Թեմա. — Կոոպերացիայի յեկ կոլեկտիվության միջոցով դեպի սոցիալիզմ:
8. Կոոպերացիան հնարավորություն է տալիս մեքենաներ ձեռք բերել:
9. Վարկալիս կոոպերացիան նպաստում է գյուղացու տնտեսության բարձրացման:
10. Կոոպերացիան բավարարում է գյուղացու սպառողական պահանջները:

4. Կոլտնտեսությունները, խորհրդատեսությունները և կոմունաները բարձրացնում են գյուղատնտեսության արտադրողականությունը:

Բ. Բ Ա Ժ Ի Ն

ԻՆԿՈՒՍՏՐԻՑՄԸՆ ՈՐԿԵՆՐՈՎ.

1. Թեմա. — Գյուղի և քաղաքի կապը.
2. Թեմա. — Մետաղը, վառելիքը վորպես հիմք արդյունաբերության:
3. Թեմա. — Նոր գործարաններ կառուցենք.
4. Թեմա. — Ելեկտրոֆիկացիա: Ծանր արդյունաբերություն:
5. Թեմա. — Արհմիությունը կոմունիզմի զբաղումը է:

Գ. Բ Ա Ժ Ի Ն

ՓՆԻՐԱՆՔԵՐ Ե ԿԱՐԱԳՆԵԼ ԽՈՐՀՈՐԴՆԵՐԻ ԻՇԽԱՆՈՒՅՈՒՄՆԵՐ, ՎՈՐԸ ԳՅՈՒՂԱԳԻԱԿԱՆ ՄԱՍԱՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐ ԲԱՆՎՈՐ ԳԱՍԱԿԱՐԳԻ ԻՇԽԱՆՈՒՅՈՒՄՆԵՐ Ե,

1. Թեմա. — Տեղական խորհուրդներն իրագործում են սոցիալիստական շինարարության խնդիրները:
2. Թեմա. — Աշխատավորների մասնակցությունը չեղրի կազմավորման գործին:
3. Թեմա. — Խորհրդային իշխանությունը մի-

ացնում ե գանազան ազգութիւններէ աշխատա-
վորներին մի յեղբայրական միութեան մեջ:

Դ. ԲԱԺԻՆ

ԱՆՀՐԵԹԵՑ Ե ԱՄՐԱՅՆԵԼ ԽՈՐՀՐԳԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ. ՎՈՐԸ ԱՄ-
ԲՈՂՋ ԱԾԽԱՐՀԻ ԱԾԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՀՆԱՐԱՐՆԵՆ Ե.

1. Թեմա. — ԽՍՀՄ-ն աշխատավորներէ մի-
ակ հանրապետութիւնն ե ամբողջ աշխարհում:

1. Գլխավոր կապիտալիստական յերկրները.

2. Բուրժուական յերկրներում իշխանութիւնը
կապիտալիստներէ և կալվածատերերէ ձեռքումն
ե գտնվում:

3. Բուրժուական յերկրները շահագործում են
գաղութներէ աշխատավորութեան:

4. Բուրժուական յերկրները թշնամական
քաղաքականութիւն են վարում ԽՍՀՄ-ի դեմ:

5. Արտաքին առևտրի մենաշնորհը սոցիալիս-
տական շինարարութեան հիմքերիցն ե:

2. Թեմա. — Կարմիր բանակը Միութեան պա-
հակն ե:

3. Թեմա. — ԽՍՀՄ-ն Համաշխարհային պրո-
լետարիատի սոցիալիստական հայրենիքն ե:

10. ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՈՎԱՆԳԱՌՈՒԹՅՈՒՆ ՈՒ ՀԱՅՈՐ- ԳԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ

ա) ԸՆԹԵՐԳԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Սահուն, պարզ և իմաստալից ընթերցա-
նութիւն, ճիշտ արասանելով յուրաքանչյուր
բառը և վանկը:

2. Վերջակետի, միջակետի, ստորակետի և
բութի ընթերցանութիւնը:

3. Առոգանութեան շանններէ (հարցական, շեշտ,
յերկար) ընթերցանութիւն:

4. Կարդացած հոգվածի հիմնական մտքի
պարզաբանութիւն:

բ) ԲԱՆԳԱՎՈՐ

1. Լրիվ, ճիշտ ձևակերպած, բայց կարճ ու
կանոնավոր խոսքերով գրական մաքուր լեզվով
պատասխանել այն հարցերին, վոր կապված են
հոգվածի վերլուծութեան հետ:

2. Նույնպիսի լեզվով կազմված փոքրիկ պատ-
մըվածքներ միջավայրի կյանքից, կենցաղից և
արտադրութիւնից, տեսած կինո թատրոններից
և այլն:

3. Կարդացած հոգվածի հիմնական միտքը հա-
մառոտ վերարտադրութիւն:

բ) Աւանդուածք, գրով և քերթով

1. Ծանոթութիւն զբոլոր անվանը, հեղինակի հրատարակչութեանը, գնին:
2. Նյութերի ցանկի միջոցով ծանոթութիւն զբոլոր բովանդակութեանը: Պետք յեղած հոգիւմով գտնելը ցանկի միջոցով:
3. Բառարանի գործածութիւն:
4. Ծանոթութիւն լրագրի բովանդակութեանը՝ «Այսօրվա համարում» վերնագրումների միջոցով:
5. Ծանոթութիւն թերթի գլխավոր բաժիններին:
6. Հոգիւմով մասերի բաժանել և վերնագրել:
7. Տարրական զաղափար սխեմի, պլանի, կոնսպեկտի մասին:
8. Լուսանցքային ղիտողութիւններ և ընդգծումներ:

Գ) Ուղղագրութիւն

1. Վերջակետ և մեծատառի գործածութիւնը: Մեծատառը նոր սկսելիս և հատուկ անունների դեպքում:
2. Ստորակետի գործածութեան գլխավոր (թրվարկութիւն, միջանկյալ բառեր և ասուլթներ, կոչական):
3. Չափերի և գծերի գործածութիւնը ուրիշ խոսքի դեպքում:

4. Հարցականի, յերկարման և շեշտի գործածութիւնը:

5. Յա, յու, յո, յե, այ, ույ, ոյ, էյ, յերկձայների ուղղագրութիւնը:

6. Ած, ացած, յուն, (հնչուն, սոսափուն), քան, ութիւն, ածանցների ուղղագրութիւնը:

7. Դասական թվականների ուղղագրութիւնը (մինչև 20 ըդ):

8. Վանկատում (վանկերի բաժանում) և տողադարձ:

9. Ոժանդակ բայերի ուղղագրութիւնը:

10. Հոգնակի վերջավորութիւնների (եր, ներ) ուղղագրութիւնը:

յե) Գրավորի վաւորութիւններ.

1. Մշակված (կոլլեկտիվ կերպով դասարանում) կարճ խոսքերի և հատվածների արտագրութիւն:

2. Հարցեր մշակել կարդացածի շուրջը և նրանց պատասխանները գրի առնել տետրերում: Նույնը կատարել և կարճ անկետի նկատմամբ (յերկու դեպքումն էլ աշխատանքը կատարել կոլլեկտիվ կերպով նախապես գրելով գրատախտակի վրա:

3. Տվյալ բառերից խոսքեր կազմել:

4. Նախապես պլան կազմել հարցերի ձևով,

ապա ըստ այդ պլանի կազմել և գրի առնել փոքրիկ պատմվածքներ:

5. Ինքնուրույն կերպով կազմել և գրել՝ հայտարարություն, դիմում, հավատարմագիր, ստացական, նամակ, հեռագիր, արձանագրություն և այլն:

6. Գրել հորվածներ պատի թերթի և թղթակցություններ պարբերագրերի համար՝ պարզ լեզվով: Ճիշտ ձևվաբանված ու կարճ:

7. Կարգացածի շատ համառոտ բովանդակություն և քննադատական դիտողություններ:

8. Հավաքականորեն կազմել և գրի առնել լուղունգներ զանազան հեղափոխական տոների և կամպանիաների առթիվ:

9. Գրավոր վերարտադրել (շատ պարզ խոսքերով և համառոտ կերպով) կյանքում տեսածն ու դիտածը (կինո, թատրոն, միտինգ, երևույթներ և այլն):

գ). Մաթեմատիկական վարժույթներ

Յերկնիշ թվերը և հոռոմեական թվանշանները գրել և կարդալ հաշիվներ հարյուրավորի շրջանում տասնյակներով:

Յեռանիշ ու քառանիշ թվեր կարդալ ու գրել:

Ամբողջի պարզ մասերը (կես, քառորդ, մեկ ութերորդ):

Մասերի և տոկոսների համեմատությունը: Դրական և բացասական թվեր (ջերմաչափի վրա):

Ժամանակի վերաբերյալ հաշիվներ:

Ամեն մեծություն բազմանիշ թվեր կարդալ ու գրել (կրկնություն անցածի):

Շրջանաձև ուղղանկյուն դիագրամ կարդալ ու կազմել:

Տարածություն չափումը մասշտաբով, գծել հատակագիծ:

Մեծ թվերի գումարումն ու հանումը և այդ գործողությունների ստուգումը:

Գումարման և հանման ճիշտ ու կրճատ ձևերը (բանավոր):

Չափումներ կատարել: Միանիշ թվով բանավոր ու գրավոր բազմապատկել: Պլոթագորյան աղյուսակ (կրկնություն անցածի):

Յերկնիշ թվերը բանավոր ու գրավոր բաժանել միանիշ թվի վրա:

Յերկնիշ թվով գրավոր բազմապատկել:

Թվաբանության չորս գործողությունները ամեն մեծություն ամբողջական թվերով:

Մակերես գտնել:

Տասնորդական կոտորակների գումարումն ու հանումը:

Տոկոս գտնելը:

Ուղիղ գծեր քաշել և ուղիղ անկյուններ կառուցել:

Ծավալի չափերը:

Մետրական չափերը մշակվում են ամբողջ դասընթացի ընթացքում:

բ) ԱՇխատհագրություն

1. Ինչպես ե պատկերացվում քարտեզի վրա ջուրը, քաղաքներն ու գետերը, լեռները, գաշտավայրերն ու հովիտները, սահմանները:

2. Ցույց տալ աշխարհի մասերը:

3. Խ.Ս.Հ.Մ-ի վարչական քարտեզի վրա գտնել Խ. Հայաստանը, Անդրկովկասի մյուս հանրապետություններն ու ինքնավար շրջանները, Խ.Ս.Հ.Մ-ի վեց անկախ հանրապետությունները:

4. Կիսագնդերի վրա գտնել Խ. Ս. Հ. Մ-ի ու թյան առանձին հանրապետությունները և կապիտալիստական ամենագլխավոր յերկրները:

5. Գտնել Չինաստանը, Հնդկաստանը, Պարսկաստանը, Տաճկաստանը և սահմանակից պետությունները:

բ Հասարակագիտություն

Հասարակագիտության ծրագրի բովանդակությունը պիտի լինի «արդիականությունը»:

Ուսուցիչը պետք է և լեզուն, և մատենատիկան, և աշխարհագրությունն անցնի արդիականություն տեսակետից և արդիական մատերիալով լիովին թափանցված ու հագեցած:

Բացի այդ՝ շաբաթական առնվազն յերկու առանձին ժամ պետք է հատկացնել քաղաքատիրապետության, Քաղժամի դեպի մոտենալի առարկա պիտի լինեն՝

1. Որաթերթի ընթերցման հիման վրա՝ շաբաթական քաղաքական տեսություն:

2. Հերթական կամպանիաներ (լուսաբանություն և մասնակցություն):

3. Հրատապ քաղաքական խնդիրների (կուսակցական և այլ հասարակական), լուսաբանություն:

4. Անցած նյութի հետ կապված հասարակական-քաղաքական խնդիրների պարզաբանում և խորացում:

5. Լրացում և խորացում հասարակական-քաղաքական այն անհրաժեշտ գիտելիքների, վորոնք համակարգման են լենինարկվում ուսանողի իմացությունները:

6. Խորհրդային իշխանության կառուցվածքի մասին տարրական գաղափար:

7. Հասարակական կազմակերպությունների մասին տարրական գաղափար:

Սակայն քաղաքապետները գլխավոր առանցքը պիտի կազմի «Հնգամյա պլանը» և «Կոլխոզ շարժումը»: Ի նկատի ունենալով այս խնդրի կարևորությունը ստորև տալիս ենք դրա բովանդակության ծրագրային կմախքը:

Ժ Հնգամյա պլանը յեվ Կոլխոզ-հարժումը

1. Ներածություն.- Կապիտալիստական տերնտեսության անկազմակերպ լինելը և սոցիալիստական տնտեսության կազմակերպված բնույթը: Մեր տնտեսության պլանային կազմակերպման ձեռնարկումները քաղաքացիական պատերազմից հետո և սոցիալիստական վերակառուցման շրջանում:

2. Արդյունաբերության դերը ժողովրդական տնտեսության մեջ:

Ծանր և թեթև արդյունաբերություն, Ծանր արդյունաբերության զարգացման անհրաժեշտությունը և Միության համար կապիտալիստական ողակման պայմաններում: Նրա դերը գյուղատերտեսության զարգացման ապրանքային սովի և յերկրի պաշտպանության մեջ:

Ելեկտրոֆիկացիայի նշանակությունը գյուղատնտեսության և արդյունաբերության համար:

Տրանսպորտն ըստ հնգամյա պլանի:

Կոոպերացիան հնգամյակում:

Առևտրի (արտաքին և ներքին) սոցիալիստական և մասնավոր սեկտորը հնգամյակում:

Բնակչին արարություն, աշխատավարձի և գործազրկության խնդիրը հնգամյակում:

Նոր կադրերի պատրաստում:

3. Գյուղատնտեսության դրությունը մինչև ներառ սոցիալիստական վերակառուցումը: Գյուղատնտեսության և արդյունաբերական զարգացման տեմպերը: Գյուղատնտեսության զարգացման կապիտալիստական (աջերի անխուսափելի հանգրվանը) ու սոցիալիստական (կուսակցության գիծը) ուղիները:

Ծանր արդյունաբերության դերը կոլեկտիվացման խնդրում:

Կոլխոզ շարժման պլանավորումը հնգամյակում:

4. Անդր. ՍՖԽՀ-ի հնգամյա պլանը վերաբերանբաժան մասը և Միության հնգամյա պլանի: Ելեկտրոֆիկացիան և լեռնային արդյունաբերությունը հնգամյակում: Քիմիական արդյունաբերություն, Կուլտուրական տեխնիկական բույսերի մշակումը: Տրանսպորտի զարգացումը Անդրկովկասի հնգամյակում:

Խորհրդային Հայաստանի հնգամյակը. — Ար-

գլուխաբերութիւն (հանքային, տեքստիլ, քիմիական, շինանյութերի և այլն):

Հայաստանի ելեկտրիֆիկացիան (Զորագետ, Քանաքեռ):

Հաղորդակցութիւնը: Գյուղատնտեսութեան հնգամյա պլանը: Կուլտուր-կրթական պլանը:

6. Հնգամյա պլանի առաջին տարին և տեւպի տարագացման հնարավորութիւնները - քառամյա պլանի վերածելու ուղղութեամբ:

11. ԱՅԻՆՏԵՆՔՆԵՐԻ ՊԼԱՆԻ ՄԱՍԻՆ

Ունակութիւնների այս ծավալը վեցամսյա (գլուղական) և տարեկան (քաղաքային) հանրակրթարանների համար կանխատեսված միջնորդութիւնն է:

Այդ չերկու տիպի հանրակրթարանների տարբերութիւնն, այդպիսով փոշ այնքան վարժույթների ու գիտելիքների ծաւալին է վերաբերում, փոքրան նրանց խորացման աստիճանին: Քաղաքի պայմանները (ուսումնական տարվա յերկարութիւնը, միջավայրի նպաստավոր պայմանները զարգացման տեսակետից) հնարավորութիւն են տալիս այստեղ նշված վարժույթները կենցաղային, հասարակական, քաղաքական և արտադրական բնույթի նշաններով ավելի խոշոր չափով հագեցնել, քան գլուղում. հետևաբար քաղաքի հան-

րակրթակները նույն ծրագիրն անցնում են ավելի խորացած, քան գլուղինը:

Այս ծրագիրն անցնելուց առաջ անհրաժեշտ է, փոր ածեն ուսուցիչ առաջուց կազմի ամբողջ ուսումնական տարվա աշխատանքների որացուցալին պլանը՝ ի նկատի ունենալով՝ ա) Ծրագիրը (հաշորդաբար մշակվող թեմաները), բ) դասագրքերի հոգվածները, գ) այստեղ բերված վարժույթների ծավալն ու բովանդակութիւնը: Նա պիտի միացնի դասագրքում իրար հաշորդող հոգվածները մի թեմայի տակ և վարժույթներն այնպես համաչափ բաշխի, փոր յուրաքանչյուր թեմայի հետ կապված՝ վարժույթների փորոշ ծավալ անցնի:

Իբրև նմուշ բերենք մի թեմա՝ քաղվարիանտի դասագրքից (Դեպի նոր կյանք):

ԱՌԱՋԻՆ ԲԱԺԻՆ

ԻՆԿՈՒՍՏՐԵՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐՈՎ.

(40 պարսպմունք 80 դասածաւ)

Նոր կյանք կառուցենք.

1. Յենթաթեմա. - Քաղաքը ներկայում և անցյալում (5 պարագմունք):

Մերոգական մշակման ընթացքը.

Ա.) Ներածական գրույց (10 բուպե). քաղաքի արտաքին տեսքն ու տպավորութիւնն այժմ

(Չարենցի՝ «գարուն» և Ալազանի «Բագուն» հոդվածները): Համեմատել անցյալի հետ և շեշտել տարբերությունները: Ինչն է այդ փոփոխություն պատճառը:

Բ) Լեզու (45 ըուպե, — ծանոթություն գրքի անվան. հեղինակին, գնին և այլն: Լուռ ընթերցանություն: Վոտանավորի ընթերցանությունը պարզ, լրիվ և արտահայտիչ առողջանությունը: Կարդացածի շուրջը կուլեկտիվ կերպով նշանակված հարցերի բանավոր պատասխաններ:

Մշակված կարճ խոսքերի արտագրություն (գրատախտակից):

Մեծատառը գրության սկզբում, վերջակետից հետո և հատուկ անուններում:

Հասցե (հասարակ և պատվիրած):

Գ) Հաշիվ (35 ըուպե) Յերկնիշ թվերի գրություն և ընթերցում: Հռոմանկան թվեր գրել, և կարգալ: Հաշիվներ հայրյուլավորը շրջանում տասնյակներով:

Դ) Աւստրալիա (20 ըուպե) ՀՍԽՀ-ի և ԱՍՖԽՀ-ի քարտեզների վրա ցույց տալ ցամաքի, ջրի, լեռների, հարթություն, քաղաքների և սահմանների պայմանական գծագրությունը:

Բերենք մի նմուշ ել գյուղական վարիանտի դասագրքից («Խորհրդային գյուղ»):

Ա. ԲԱԺԻՆ (31 պարապմունք).

ԱՆՔԱՆԻՆ Ե ԲԱՐՁՐԱՆԵԼ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ:

1. քեմա. Նոր կյանք ենք կառուցում (5 պարապմունք).

Բովանդակություն.

Մինչև հեղափոխությունը հողը պատկանում էր կալվածատերերին: Խորհուրդային իշխանությունը հողը հանձնեց գյուղացիներին ու հնարավորություն տվեց նրանց կառավարել պետությունը:

Խորհրդային իշխանության որով գիտությունը մատչելի դարձավ գյուղացիներին. գիտությունը ոգնում է գյուղացուն բարձրացնել իր կյանքը:

Վարժույթներ.

Լեզվի. ծանոթություն գրքի անվան, հեղինակի, գին և այլն: Փոքրիկ հոգվածի կարճ ասույթի դանդաղ ընթերցանություն: Յուրաքանչյուր վաճկի ու բառի պարզ առողջանությունը:

Կարդացածի շուրջը մշակված հարցերի բանավոր պատասխաններ:

Մշակված կարճ խոսքերի արտագրություն:

Գլխատուր գրության սկզբում և վերջակետից հետո:

ՀԱՇՎԻ - Յերկնիշ թվերը գրել ու կարդալ: Հոռմեական թվանշանները գրել ու կարդալ: Հաշիվներ հարուրավորի շրջանում, տասնյակներով:

ԱՇԽԱՏԱՆՔ ՔԱՐՏԵԶՈՎ, ՀՍԽՀ-ի և ԱՍՖԽՀ-ի քարտեզների վրա ցույց տալ ցամաքի, ջրի, լեռների, հարտության, քաղաքների, իր գավառի և գավառակի սլաշմանական գծագրությունը:

10

ՀՀ Ազգային գրադարան



NL0239104

